Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՀՈՒՇԻՆ ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐՐԱՆ

ՀՏԴ 941 (479.25):325
ԳՄԴ 63.3(2Հ)+66.3(2Հ)
Շ 973

Գիտաժողովը նվիրվում է
Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին

Տպագրվում է գիտաժողովի խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
Արտակ Մաղալյան

Գիտաժողովի ծրագրային կոմիտե՝
Արամ Սիմոնյան – ԵՊՀ ռեկտոր, **Վլադիմիր Բաբխուդարյան** – ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, **Բաբկեն Հարությունյան** – ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս քարտուղար, **Աշոտ Մելքոնյան** – ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, **Ռուբեն Սաֆրաստյան** – ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, **Աբրահամ Աղասյան** – ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, **Պավել Ավետիսյան** – ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն

Շ 973 ՇՈՒՇԻՆ ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐՐԱՆ: Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր: – Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007, – 370 էջ + 1 էջ ներդիր:

ԳՄԴ 63.3(2Հ)+66.3(2Հ)

ISBN 978-5-8080-0715-4
© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2007

ՄՈՒՐԱԴ ՀԱՍՐԱԹՅԱՆ
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ

ՇՈՒՇԻԻ ՂԱԶԱՆՉԵՑՈՑ Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

XIX դ. հայկական ճարտարապետության գլուխգործոցը Շուշիի Ս. Ամենափրկիչ մայր եկեղեցին է, որը, կառուցված լինելով Նախիջևանի Ղազանչի (Շահկերտ) գյուղից գաղթած բնակիչների նախաձեռնությամբ ու միջոցներով, հայտնի է նաև «Ղազանչեցոց եկեղեցի» անունով:

Հարավային մուտքի վերևում պահպանվել է ընդարձակ շինարարական արձանագրությունը՝ «Շնորհիւ եւ ողորմութեամբ ամենազօրին Աստուծոյ կառուցաւ հրաշակերտ սուրբ տաճարս արդեամբ և տրօք բարեպաշտոն ժողովրդականաց Սուրբ Ամենափրկիչ եկեղեցւոյն Ղազանչեցւոց Շուշի քաղաքիս, որոյ շինութիւնն սկսեալ ի 1868 ամի յաւուրս թագաւորութեան աստածազօր ինքնակալ մեծ կայսեր ամենայն Ռուսաց Աղեքսանդրի Բ-ի և ի հայրապետութեան Գեորգայ Դ-ի, աւարտեցաւ ի 1887 ամի ի թագաւորութեան որդւոյ նորին օրհնաբանեալ կայսեր Աղեքսանդր Գ-ի եւ ի կաթողիկոսութեան Մակարայ Ա-նոյ ի 20 սեպտեմբերի 1888 ամի»[1]:

Եկեղեցու կառուցումն ունեցել է իր երկարամյա նախապատմությունը, որը հայտնի է դառնում Հայաստանի ազգային արխիվում պահվող փաստաթղթերի շնորհիվ (արխիվային նյութերն ուսումնասիրել և եկեղեցու չափագրության հետ 1996 թ. հրատարակել է ճարտարապետ Մ. Սարգսյանը)[2]:

Ներկայիս եկեղեցու տեղում XIX դ. առաջին կեսին գոյություն է ունեցել մի այլ՝ գմբեթավոր բազիլիկի հորինվածքով եկեղեցի, որի՝ արդեն 1847 թ. խարխուլ վիճակում գտնվելու պատճառով օրակարգի հարց էր դարձել նրա հիմնովին վերա-

[1] *Մ. Բարխուդարեանց*, Արցախ, Բաքու, 1895, էջ 137–138:
[2] *М. Саркисян*. Из истории градостроительства Шуши. Е., 1996, с. 24.

նորոգումը: Արցախի թեմի մետրոպոլիտ Բաղդասարը 1847 թ. դիմում է Էջմիածնի Սինոդին՝ եկեղեցու նորոգման խնդրանքով: Այդ հարցին նվիրված քառամյա գրագրությունից հետո որոշվում է վթարային վիճակում գտնվող հին եկեղեցու տեղում կառուցել նորը, և 1867 թ. նախագիծը պատվիրում են ճարտարապետ Սիմեոն Տեր-Հակոբյանին: Հոգևորականությունը և համայնքը ցանկություն են հայտնում, որպեսզի եկեղեցին կառուցվի Անիի Մայր տաճարի օրինակով, սակայն ներկայացված նախագիծը, հիմնականում ունենալով վերջինիս քառամույթ գմբեթավոր հորինվածքը, ուներ նաև էական տարբերություններ ինչպես համաչափություններում (բազիլիկայինի փոխարեն գրեթե կենտրոնագմբեթ ծավալային և հատակագծային լուծումով), այնպես էլ որոշ կարևոր մանրամասներով (արտաքուստ շեշտված կիսաշրջանաձև, առանց լուսամուտների Ավագ խորան, մուտքերի դիմաց բաց նախասրահներ)[3]: Նախագիծը հաստատելիս թեմի ղեկավարությունը պահանջում է նախասրահները ծածկված իրականացնել, և վերամշակումից հետո նախագիծը հաստատվում է 1870 թ.[4]:

Ուշագրավ է, որ կառուցվելուց հետո Շուշիի Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցին իր արտաքին, ծավալատարածական հորինվածքով արդեն նմանվեց Հայ Առաքելական եկեղեցու գլխավոր՝ Էջմիածնի Մայր տաճարին՝ արտաքուստ խաչաձև, կենտրոնագմբեթ, չորս հզոր մույթերի վրա բարձրացող գմբեթով: XIX դ. և XX դ. սկզբում Էջմիածնի Մայր տաճարը նախատիպ եղավ ևս երկու հայկական եկեղեցիների համար՝ Ատրպատականում Արտազի Ս. Թադեի վանքի Կաթողիկե (1810–1820 թթ.) և Մոլդովայի Բելցի քաղաքի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիների (1910–1912 թթ.) համար[5]:

[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:
[5] *Մ. Հասրաթյան*, Արտազի Ս. Թադեի վանքի ճարտարապետությունը, «Հուշարձան», Տարեգիրք Գ, Ե., 2005, էջ 17–18, *Ա. Թորամանյան*, Մոլդավիայի հայկական պատմաճարտարապետական հուշարձանները, Ե., 1986, էջ 29:

Շուշիի Ս. Ամենափրկիչ եկեղեցին, սակայն, ունի էական տարբերություն ինչպես վերոհիշյալ եկեղեցիների, այնպես էլ Էջմիածնի Մայր տաճարի համեմատ: Շուշիում արևմտյան, հյուսիսային և հարավային խաչաթևերը ոչ թե աղոթասրահի հետ օրգանական ամբողջություն են կազմում (ինչն առկա է Էջմիածնի Մայր տաճարում և նրա կրկնություններում), այլ հաղորդակցվում են դրա հետ դռնով՝ փաստորեն լինելով նախասրահ-գավիթներ[6]: Տարբեր է նաև երեք լուսամուտով Ավագ խորանի ձևը այն դրսից ոչ թե բազմանիստ է, այլ կիսաշրջանաձև: Իսկ խորանի և նրա երկու կողմի ավանդատների տակ կա ներքնահարկ, որը կրկնում է վերջիններիս հատակագիծը և մուտք ունի հյուսիսային և հարավային սենյակներից:

Եկեղեցին կառուցվել է սրբատաշ կաթնագույն կրաքարից և աչքի է ընկնում իր փառահեղությամբ, վեհությամբ, և այդ տպավորությունն ուժեղանում է սլացիկ և չափազանց բարձր գմբեթով: 12 նիստանի թմբուկով և հովանոցաձև վեղարով գմբեթը եկեղեցու հիմնական ծավալից զգալի բարձր է: Ընդհանուր վերցրած՝ Շուշիի Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցին իր բարձրությամբ (40 մ) և մեծությամբ (արտաքուստ չափերը մոտ 44 × 38 մ) մինչև Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու կառուցումը հայկական ամենախոշոր գմբեթավոր եկեղեցին էր:

Շուշիում XIX դ. եկեղեցին զարդարված է եղել արձաններով (չեն պահպանվել). չորս ճակտոնների վրա դրվել են խաչը գրված Քրիստոսի, Ս. Հովհաննես Մկրտչի, Խաչափայտի և Սուրբ Հոգու քարե քանդակները[7]:

XIX դ. եկեղեցում պահվող սրբություններից են եղել արծաթյա խաչում զետեղված Կենաց Փայտի, Ս. Գևորգի, Ս. Թեոդորոսի, Ս. Մինասի մասունքները, ինչպես նաև Ս. Գրիգոր Լուսավորչի թոռան՝ Ս. Գրիգորիսի արծաթյա, ոսկեզօծ Աջը[8]:

[6] *Մ. Հասրաթյան*, Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը, Ե., 1992, էջ 102:

[7] *Մ. Բարխուտարեանց*, նշվ. աշխ., էջ 141–142:

[8] Նույն տեղում, էջ 141:

Ներդաշնակ համաչափություններով, կոթողային կերպարով, շահեկան տեղադրությամբ Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցին Շուշի քաղաքի ողջ համայնապատկերի ուղղաձիգ գերիշխող շեշտն է:

Ս. Ամենափրկիչ եկեղեցու ճարտարապետությանը ինչպես գույնով (նույնն է քարը), այնպես էլ հորինվածքով ու մանրամասներով ներդաշնակ է զանգակատունը, որը, սակայն, կառուցվել է ավելի վաղ, քան ներկայիս եկեղեցին՝ վերջինիս նախորդի կանգուն ժամանակ: Զանգակատունը գտնվում է Ս. Ամենափրկիչ եկեղեցու արևմտյան մուտքի դիմաց՝ մոտ 6 մ հեռավորության վրա, և կառուցվել է Հովհաննես ու Աբրահամ Երամիշյանների նախաձեռնությամբ 1844–1858 թթ.[9]:

Մոտ 22 մ բարձրությամբ զանգակատունն ունի քառակուսի հատակագծով ստորին հարկ (որը, փաստորեն, թաղածածկ անցում է դեպի եկեղեցու մուտքը) և ութանիստ երկրորդ հարկ, վրան հովանոցաձև վեղարով և ութանիստ թմբուկով գմբեթ: Երկրորդ հարկի չորս անկյուններում փող փչող հրեշտակների մեծադիր քարե արձաններ են դրվել:

Շուշիի Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցին գործել է մինչև 1930 թ., մասամբ նորոգվել 1981–1988 թթ. վերականգնող Վ. Բաբայանի ջանքերով: 1988 թ. Շուշիի հայաթափ լինելուց հետո ադրբեջանցիները ջարդել են զանգակատան հրեշտակների արձանները և եկեղեցին վերածել զինապահեստի: 1992 թ. մայիսի 9-ին Շուշիի ազատագրումից հետո շարունակվել է եկեղեցու և զանգակատան նորոգումը, որն ավարտվել է 1998 թ.: Վերականգնվել են նաև զանգակատան հրեշտակների արձանները:

Շուշիի Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցին վերաբացվել և մեծ հանդիսությամբ վերաօծվել է 1998 թ. հուլիսի 19-ին՝ Քրիստոսի Պայծառակերպության օրը, և այսօր Արցախի թեմի առաջնորդանիստ եկեղեցին է:

[9] *М. Саркисян*, ук. соч., с. 24.